

ՀՈՒԼԻՍ 2023

ԱՄՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>3</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	4
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում .....	7
1.3. Ջրահեռացման համակարգ .....	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	8
1.5. Էներգահամակարգ .....	9
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	9
<b>2. Առևտրային տնօրինություն</b> .....	<b>10</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	11
2.2. Հասույթ .....	11
2.3. Գանձում .....	13
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/ .....	13
2.5. Ջրաչափեր .....	14
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում .....	15
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>16</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	17
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	18
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	20
3.4. Ջրատար համակարգի բարելավում .....	20
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն .....	21
3.6. 1-85 թեժ գիծ .....	22
<b>4. Լրատվական ծառայություն</b> .....	<b>23</b>
<b>5. Որակի, առողջության և անվտանգության բաժին</b> .....	<b>26</b>
5.1. Դասընթացներ/սեմինարներ .....	27
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում .....	28
5.3. Համագործակցություն ՀՀ ՆԳ Նախարարության և մարզպետարանների հետ .....	29
5.4. Արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ .....	29
<b>6. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ</b> .....	<b>30</b>
6.1. Համակարգչային ցանց .....	31
6.2. Ինտերակտիվ համակարգ .....	31

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### Գեղարքունիքի մարզ

● «Սևան» տեղամասի աշխատակիցների կողմից սեփական ուժերով ծրագրի շրջանակներում Կոտայքի մարզի Ջրառատ համայքը սնող  $d=300$ մմ վթարված պողպատե ջրագիծը փոխարինվել է  $d=110$ մմ պեթ  $L=2300$ զմ խողովակաշարով:



### Սյունիքի մարզ

● «Կապան» տեղամասի աշխատակիցների կողմից Բաղաբերդ թաղ.28 (Պոլիտեխնիկի հարևանությամբ՝ պոմպակայանի ջրագիծ) հասցեում իրականացվել են  $d=133$ մմ  $L=270$ զմ մետաղական խողովակաշարի կառուցման աշխատանքներ, տեղադրվել է թվով 1  $d=150$ մմ փական և թվով 1  $d=50$ մմ ճնշման կարգավորիչ փական, ինչպես նաև տեղադրվել է ե/բ դիտահոր 1500\*1000մմ:



### Արարատի մարզ

● «Արտաշատ» տեղամաս. Տափերական բնակավայրի Հ.Այվազովսկու, Արցախյան փողոցների և նրանց հարակից փակուղիների ջրագծերը կառուցվել են 1970-ական թվականներին  $d=80-100$ մմ թուջե և մետաղական խողովակներով, որոնք գտնվում էին քայքայված վիճակում և պիտանի չէին հետագա շահագործման համար: Հաճախակի առաջացած վթարները բերում էին ջրի պղտորվածության, ճնշման անկման, ինչպես նաև ջրի որակի վատթարացման տեղիք տալով բաժանորդների կողմից հաճախակի կրկնվող բողոքների:

Աշխատակիցների կողմից սեփական ուժերով ծրագրի շրջանակներում վերոնշյալ փողոցներում և փակուղիներում իրականացվել են նոր ջրագծերի կառուցման աշխատանքներ պեթ  $d=20-110$ մմ խողովակներով  $L=2140$ զմ, ջրաչափական դիտահորերի տեղադրում թվով 23,  $d=15$ մմ բրոնզե փականների տեղադրում թվով 96,  $d=15$ մմ նոր ջրաչափերի տեղադրում թվով 67, ջրաչափական սարքերի տեղափոխում սահմանազատման կետ թվով 25, միացում գործող  $d=100$ մմ թուջե ջրագծի հետ 3 տեղ, ե/բ դիտահորի և ծածկի տեղադրում թվով 2,  $d=100$ մմ փականի տեղադրում թվով 1, շահագործումից հանվել է  $d=20-100$ մմ մետաղական և թուջե ջրագծեր  $L=2140$ զմ:

Շինարարական աշխատանքների ընթացքում պարզվել է, որ Հ.Այվազովսկի, Արցախի փողոցներին հարակից Պ.Սևակի և խորհրդային փողոցների ջրագծերը կառուցված 1980-ական թվականներին, մետաղական և թուջե  $d=50-80$ մմ խողովակներով գտնվում էին քայքայված, կոռոզիայի ենթարկված վիճակում, պիտանի չէին հետագա շահագործման համար և նույնպես ունեն վերակառուցման անհրաժեշտություն: Աշխատակիցների կողմից իրականացվեց նաև Պ.Սևակ և խորհրդային փողոցների և նրանց փակուղիների ջրագծերի վերակառուցման աշխատանքները հետևյալ ծավալներով  $d=20-110$ մմ պեթ խողովակի մոնտաժում, ջրաչափական դիտահորերի տեղադրում թվով 13,  $d=15$ մմ բրոնզե փականների տեղադրում թվով 28,  $d=15$ մմ նոր ջրաչափերի տեղադրում թվով 16, ջրաչափական սարքերի տեղափոխություն սահմանազատման կետ թվով 5, միացում գործող  $d=100$ մմ թուջե մետաղական ջրագծերի հետ 2 տեղ, շահագործումից հանվել է  $d=20-100$ մմ մետաղական և թուջե ջրագծեր  $L=1181$ զմ: Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է Տափերական բնակավայրի Հ.Այվազովսկի, Արցախի, Պ.Սևակ, խորհրդային փողոցներին մատակարարվող խմելու ջրի քանակը և որակը, վերացվել են գաղտնի վթարները և ապօրինի միացումները, տնտեսվել է մոտ 4/վրկ ջրաքանակ, կատարվել է ցանցի աշխատանքների ճիշտ կազմակերպում, հասույթի աճ:



● «Էրեբունի» տեղամասի աշխատակիցների կողմից Խարբերդ ՕԿՁ-ի պոմպակայանից միացված  $d=800$ մմ պողպատե վթարային խողովակի  $L=150$ զձ/մ հատվածը շահագործումից հանվել է, իսկ վերոնշյալ խողովակից թվով 3 միացումները տեղափոխվել են միացվել են հարևանությամբ անցնող ջրագծից: Կատարված աշխատանքների արդյունքում ակնկալվում է  $10$ լ/վրկ ջրաքանակի տնտեսում:



● Արցախի փողոց 39-47 շենքերի հատվածով անցնող  $d=400$ մմ պողպատե ջրագիծն ամբողջովին քայքայվել էր, որը հանգեցնում էր հաճախակի վթարների: Խնդրի լուծման համար «Էրեբունի» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել են կոռոզիայի ենթարկված ջրագծի փոխարինման աշխատանքներ և վերոնշյալ հատվածում  $D=400$ մմ պողպատյա ջրագծի  $L=35$ մ հատվածը փոխարինվել է  $D=300$ մմ պողպատե ջրագծով: Կատարված աշխատանքների արդյունքում բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, վերականգնվել է ջրամատակարարման շարունակականությունը:



● «Հյուսիս» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Ավան, Աճառյան փողոց 2/1 հասցեի  $D=100$ մմ պողպատե ջրագիծը գտնվում էր ծայրաստիճան քայքայված վիճակում, առկա էին բազմաթիվ վթարներ: Խնդրի կարգավորման համար տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել է  $D=50$ մմ  $L=40$  զձ/մ պոլիէթիլենային խողովակի տեղադրում ներթափանցման միջոցով: Արդյունքում շահագործումից հանվել է  $D=100$ մմ քայքայված պողպատե ջրագիծը:

● Արաշակունյաց պողոտա և Սևան փողոցի խաչմերուկի հատվածում գտնվող  $D=150$ մմ թուջե ջրագիծը գտնվում էր քայքայված վիճակում, հաճախակի էին վթարները, առկա էր ջրակորուստ: «Հարավ» տեղամասի աշխատակիցների կողմից  $D=150$ մմ թուջե ջրագիծը խցափակվել է, իսկ ջրագծից սնվող թվով 18 բնակիչ-բաժանորդի միացումները տեղափոխվել են զուգահեռ անցնող  $D=300$ մմ թուջե ջրագիծ: Միացման հանգույցներում կառուցվել է թվով 6 դիտահոր: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է  $D=150$ մմ  $L=450$ զձ/մ թուջե խողովակ, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կանխվել են հնարավոր վթարները, ջրամատակարարման ցանցը դարձել է ավելի կառավարելի, խնայվել է  $3$ լ/վրկ ջրաքանակ:



## Ջրահեռացման համակարգ

### Վայոց ձորի մարզ

● «Վայք» տեղամաս. ք. Վայք, Ալավերդյան փողոց, 2 տան հարակից տարածքում խցանված և կոտրված կոյուղագիծն այլևս պիտանի չէր հետագա շահագործման համար, ուստի աշխատակիցների կողմից այն փոխարինվել է  $d=150$ մմ,  $L=24$ գծմ պեթ երկշերտ ծալքավոր խողովակով:



● «Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածում գտնվող Հանրապետության փողոց 71 հասցեում գտնվող  $d=200$ մմ ժամանակակից կոյուղագիծը տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել է  $d=200$ մմ  $L=12$ գծ/մ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակով:

● «Հարավ» տեղամասի աշխատակիցների կողմից Եղ. Թադևոսյան փողոց 22 շենքի մոտ կառուցվել է  $d=200$ մմ  $L=39$ գծ/մ կոյուղագիծ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով: կառուցվել է թվով 2 դիտահոր:



● «Արաբկիր» տեղամասի «Զեյթուն» հենակետի սպասարկման տարածում գտնվող Մ. Մելիքայան 13 և հարակից շենքերի ջրահեռացումն իրականացվում էր  $d=250$ մմ կերամիկական կոյուղագծով, որի  $L=108$ գծ/մ հատվածը ժամանակակից էր, հաճախակի էին կրկնվող խցանումները: Կոյուղագծի որոշակի հատվածում անհնարին էր դարձել խցանման բացման աշխատանքների իրականացումը և հետագա շահագործումը: Տեղամասի աշխատակիցների կողմից վթարված հատվածը փոխարինվել է  $d=250$ մմ  $L=108$ գծ/մ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակով և տեղադրվել են  $d=1$  տրամագծով կոյուղու դիտահորեր թվով 4 հատ, իրականացվել են ընդհանուր երկարությամբ  $L=60$ գծ/մ  $d=250$ մմ Մ. Մելիքայան 13 և հարակից շենքերի կոյուղագծի մաքրման և պրոֆիլակտիկ լվացման աշխատանքներ: Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ շենքերի ջրահեռացման համակարգի աշխատանքը կայունացել է:

Հուլիս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1992
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	42040
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	43280
Հոսակորուստի որոնում կորեյաստորով	մ	18540
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	1
Շահագործումից հանված ջրագիծ	մ	2129
Կառուցված ջրագիծ	մ	11282.5
Կառուցված կոյուղագիծ	մ	859.4
Վերացված գաղտնի վթարներ	հատ	14
Փոխարինված փական	հատ	100
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	380
Մաքրված դիտահոր	հատ	1477
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	14.9

Վերացված վթարներ	Չարիման վիավոր	Քանակ
Զրամատակարարման ցանցում	հատ	0
Զրահեռացման ցանցում	հատ	0
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Հուլիս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	1018	871	1033

## 1.2. ԶՐԱԶԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հուլիս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ										Ընդամենը
	15	20	25	30	32	40	50	65	80	100	
Տեղադրված	258	2	0	0	0	0	1	0	2	0	263
Փոխարինված	230	14	15	0	8	12	8	0	1	2	290
Տեղափոխված											0
Տեխ. ակտ	291	6	4	0	0	2	1	6	6	1	317
Ընդամենը	779	22	19	0	8	14	10	6	9	3	870

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 870 ջրաչափ: Կատարված աշխատանքների 90%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

## 1.3. ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հուլիս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	0	242	18
2	Քանաքեռ-Զեյթուն	0	225	120
3	Մաշտոց	0	245	4
4	Շահումյան	0	192	31
5	Շիրակ	1370	427	22
6	Արթիկ	0	112	21
7	Ապարան	0	37	12
8	Ալավերդի	1250	24	48
9	Աշոցք	0	1	0
10	Բերդ	90	10	0
11	Իջևան	0	56	0
12	Լոռի	0	209	0
13	Նոյեմբերյան	0	18	0
14	Սյիտակ	0	16	0

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
15	Ստեփանավան	1375	8	0
16	Թալին	0	8	0
17	Տաշիր	0	7	0
18	Չարենցավան	0	99	2
19	Աբովյան	0	109	0
20	Հրազդան	0	90	101.6
21	Կենտրոն	390	226	18
22	Հյուսիս	0	214	220
23	Էրեբունի	0	130	12
24	Հարավ	0	231	0
25	Արմավիր	0	119	2.7
26	Արտաշատ	0	100	166
27	Էջմիածին	0	107	0
28	Աշտարակ	1460	41	0
29	Արարատ	0	86	36
30	Մասիս	0	44	0
31	Գավառ	320	36	0
32	Սևան	1500	57	15
33	Մարտունի	0	20	0
34	Վարդենիս	570	7	0
35	Ճամբարակ	56	10	0
36	Դիլիջան	0	56	78
37	Վայք	190	9	24
38	Եղեգնաձոր	30	12	0
39	Զեյթունկ	0	37	0
40	Սիսիան	0	45	0
41	Գորիս	0	49	0
42	Կապան	604	80	8
43	Մեղրի	100	36	0
	Ընդամենը	9305	3887	959.3

#### 1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների» ծառայության ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարա-վերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանում վթարվել էր մղման խողովակաշարը, որի արդյունքում վթարված հատվածում գոյացել էր լճակ: Արդյունքում քանդվեց գրունտը և վերանորոգվեց վթարված հատվածը: Խցանվել էին նաև հակադարձ փականները, որոնք ապամոնտաժվեցին և մաքրվեցին:

- Երևանի կեղտաջրերի մաքրման կայանում շարքից դուրս էր եկել ճաղավանդակի քերիչ սանրի շղթան, որն էլ վերանորոգվեց և այժմ աշխատում է բնականոն ընթացքով: Կատարվել են նաև ոռոգման համակարգի վթարված հատվածների վերականգնման աշխատանքներ, որի արդյունքում ոռոգման համակարգն աշխատում է բնականոն ընթացքով:

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանի տիղմի մամլիչի խողովակաշարը խցանվել էր, որի պատճառով մամլիչը դադարել էր աշխատել: Արդյունքում մամլիչի խողովակաշարը ապամոնտաժվեց և մաքրվեց առաջացած խցանումը, որից հետո սարքավորումներն աշխատում են բնականոն ընթացքով:

- Սևանի N3 կեղտաջրերի պոմպակայանում պոմպերից մեկի արտադրողականությունն ընկել էր: Պոմպը հորից դուրս բերելուց հետո պարզ դարձավ, որ բանվորական անիվը խցանվել էր, որն էլ մաքրվեց և տեղադրվեց: Խցանվել էին նաև հակադարձ փականները, որոնք ևս ապամոնտաժվեցին ու մաքրվեցին և այժմ պոմպակայանն աշխատում է բնականոն ընթացքով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:





Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	58,566	10.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	75,588	28.8
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	166,953	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	114,602	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	150,221	19.8
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	18,820	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	12,389	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	8,200	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	9,900	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	3,405	0	0

### 1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 345 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 275 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

### 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Հուլիս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման հուլիս ամսվա ընթացքում փոխարինվել են թվով 29 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, քսայուղեր և գտիչներ:

Թվով 2 մեքենա-մեխանիզմի անվադողեր նորոգվել, փոխարինվել և հավասարակշռվել են:

Թվով 2 ավտոմեքենայի մարտկոցներ փոխարինվել են նորերով:

Թվով 13 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Փոխարինվել են թվով 4 մեքենայի էլ. հոսանքի բաշխիչները, կայծամուներ, կայծամուփ լարեր:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 3 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիրչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիֆներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ



## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.08.2023թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 604,562 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2023թ. հուլիս ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	668,177	576,371	86,2
	Իրավաբանական անձ	31,683	28,191	89,0

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	743,840	582,563	78,3
	Իրավաբանական անձ	37,317	27,710	74,3

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 939 նոր բաժանորդ:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հուլիս ամսվա ընթացքում ստուգաչափվել է 5284 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 07.2023
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2371	1553	421	4345
	Իրավաբանական անձ	599	189	151	939
	Ընդամենը	2970	1742	572	5284

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ հուլիս ամսին փոխարինված 5284 ջրաչափերի մոտ 44 %-ը (կամ 2314 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 537,530 մ<sup>3</sup> հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2023թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



## 2.3 ԳԱՆՁՈՒՄ

Հուլիս ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,526 մլն. դրամ (91 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

## 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Հուլիս ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 154 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 16.5 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում են դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2023թթ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
27,144	3,689,035,805	14,490	1,649,745,583	791	151,689,990	11,864	1,889,472,153	10,166	1,175,871,354

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 53 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 3 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.08.2023թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	11,258	2,859
Բնակիչ-բաժանորդներ	7,936	1,863
Իրավաբանական անձեր	3,322	996

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Շուրջ 345.8 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով: Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2023 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



2.5 ՁՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.08.2023թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	713,773	581,413	81.46	36,260	27,700	76.39
	Առանց ջրաչափի	30,067	1,150	3.82	1,057	10	0.95

Տվյալների բազայում 01.08.2023թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	885,348	388,842	43.92	39,900	8,386	21.02

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 6000 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 782 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2452	2008	81.9
գ.Պոռշյան	1685	1149	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5990	1929	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիրը:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 16222, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 15047, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 4077, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 5118, Միսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2547, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3984 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 6958 ջրաչափական սարք:

## 2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՅՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացուցների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացուցների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	373	209,333	38,342,543

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, իրականացվում է նաև Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ






### 3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի հուլիս ամսվա շարունակականության տվյալները, կազմում է 96.3%, ինչը 0.3%-ով պակաս է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում «Շարունակականության և մոնիթորինգի բաժնի» կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 70 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1,2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաբանակը 2023թ-ի հուլիս ամսին 2022 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 367 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 170 հազար կվտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում:



### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 6403 կՎտ.ժ (1,30%), այն դեպքում, երբ նորակառույց շենքերի 9 պոմպակայան ավելացել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 9 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 6415 կՎտ.ժ, իսկ առանց այդ պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը՝ ավել կլիներ 12818 կՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)



#### Երևան քաղաքի բակային պոմպեր

Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում գույքագրվել է 67 էլ. հաշվիչ: Փոխարինվել է «Նորապատ» պ/կ-ի, «Արարատի» ՕԿՋ-ի, «Արամուս խ/հ 1» պ/կ-ի, «Արամուս խ/հ 2» պ/կ-ի, «Դալարիկ» պ/կ-ի և «Կոշ» պ/կ-ի էլ. հաշվիչները: Ամենօրյա կարգով ընթերցվել և հաշվետվություն է ներկայացվել ջրարտադրության խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ: Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ԿՈԻՊ (կարգավորվող ուղիղ բաղադրիչում) կատարվել է առևտրային գործընթաց, որի արդյունքում տնտեսվել է 8,042,084 ՀՀ դրամ: Կատարվել է էլ. էներգիայի հաշվառում, գործարքների արդյունքում ձևավորված ակտերի ստուգում, հաստատում: «ՀԷՑ» ՓԲԸ-ից ձեռք է բերվել մեկ տեխ. պայման (Ախուրյան, Ջրաշինարանների Բանական թաղամաս):


#### Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 43 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 37 պոմպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Թվով 345 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 275 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Իրականացվել են նաև վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՋ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ:

#### Ինվերտորների տեղադրում

Հաշվետու ամսում մեկ հասցեում տեղադրվել է ինվերտորային համակարգ և պոմպ. Միուբ ՕԿՋ (Ar-188): Տեղադրված ընդհանուր 81 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 3436 կՎտ.ժ 2%:




**Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ**

● Հաշվետու ժամանակահատվածում 44 խոշոր պոմպակայանում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

**Երևան քաղաքի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան**


● 2023թ. հուլիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 172 830 կՎտ/ժամ (3,46%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա*



● Ջրարտադրության պոմպակայաններում (մարզեր) էլ. էներգիայի ծախսը նվազել է 84 056 ԿՎտ/ժ/ամիս կամ 2.85 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


*Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա*



**«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիան**

● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 169 533 ԿՎտ/ժամ 1,80 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան*



### 3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են ապրիլ ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Կողբ թաղամասի վերակառուցված ջրագծերի թվայնացում	թաղամաս	1
Վարդաշեն 3-րդ և 12-րդ փողոցների վերակառուցված ջրագծերի թվայնացում	փողոց	2
Վարդանանց և Ե. Քոչար փող. խ/չ-ից մինչև Նար Դոսի փողոց և Քաջագունի թաղամաս վերակառուցված ջրագծերի թվայնացում	թվայնացում	1
«Հյուսիս» տեղամասի ջրագծերի և կոյուղագծերի ուղղումներ, թարմացումներ	տեղամաս	1
Սյունիքի մարզի Գապան քաղաքի տարածքով անցնող կոյուղագծի վերակառուցման տվայնների մուտքագրում ԱՏՀ	մարզ	1
Գեղարքունիքի մարզի Գագարին թաղամասի տարածքով անցնող կոյուղագծի վերակառուցման տվայնների մուտքագրում ԱՏՀ	մարզ	1
Երևան քաղաքի Աջափնյակ, Դավթաշեն, Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների մի շարք փողոցների կոյուղագծերի վերակառուցում	քաղաք	1
Արուսյան, Բյուրեղավան, Ջերմուկ, Ճամբարակ, Մեծամոր և Թալին քաղաքների հիդրավիկ մոդելավորում	քաղաք	6
Արարատի Բյուրավան, Նշավան, Հնաբերդ, Բերդիկ, Արևշատ, Արուսյան, Այգեստան համայնքների ջրի բաշխիչ համակարգերի հիդրավիկ մոդելավորման համար ջրագծերի թարմացում և մոդելի կառուցում	համայնք	7
268 տեխնիկական պայմանների թվայնացում	Տեխ. պայման	268
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	43
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	337
«Ինտերակտիվ» համակարգում բաժանորդ կետերի ուղղում	բաժանորդ	886
ԱՏՀ-ում Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2617
ԱՏՀ-ում Մարզային ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	9458
ԱՏՀ-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1808
ԱՏՀ-ում մարզերի կոյուղու երկարությունը	կմ	1824


### 3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հուլիս ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը.

● «Ջրառի» աշխատակիցների կողմից կառուցվեց  $d=200$ մմ  $l=70$ մ միջանկյալ միացում Արզնի սանգոտում, Արզական-Քանաքեռ և Արզնի 1 ջրատարների միջև: «Արաբկիր» ՇՏ-ի ջրաքանակները ապահովելու համար բարձրացվում էր Արզական ջրատարի ճնշումը, ջուրը Արզական-Քանաքեռ ջրատարով քաղաք հասնելու նպատակով: Հավելենք, որ ճնշման բարձրացման հետևանքով ունեցանք նաև ջրի կորուստ: Տվյալ միջանկյալ միացման միջոցով առանց ճնշման բարձրացման անհրաժեշտ ջրաքանակը ուղղորդվում է «Լամպեր» ՕԿՁ:



● «Խարբերդ» ՕԿՁ-ի ելքի ջրատարերից մեկը երկար ժամանակ չէր շահագործվում: Կատարվեց ջրատարի փորձարկում, հայտնաբերվեց ջրատարի վրա վթար: Հավելենք, որ վթարը վերացնելուց և ջրատարը լվանալուց հետո ջրատարը ջուր կմատակարարի «Շենգավիթ» ՇՏ-ի մի հատվածին:



● «Գառնի» ձորում հայտնաբերվել են երկու  $d=50$ մմ ապօրինի միացումներ, որտեղ «Արևտրային» տնօրինության աշխատակիցների կողմից կազմվել են արձանագրություններ և հանձնարավել է ՇՏ-ին ապամոնիտաժելու համար:

● «Արզնի» 1 ջրատարի շրջայցի ժամանակ «Գազի հորերի» սկզբնամասում հայտնաբերվեց վթար, որը պատճառ դարձավ մեծ վթարի և ջրանջատման:



● Ղազարավան-Էջմիածին ջրատարի շրջայցի ժամանակ հայտնաբերվեց վթար Փարպի գյուղի մոտակայքում  $d=600$ մմ թուջե խողովակի վրա  $Q=5$ լ/վ մեծությամբ:

### 3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հուլիս ամսվա ընթացքում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Կաթնաղբյուրի խորքային հորի պոմպակայանների սանիտարական գոտիներում կառուցվել է 1 կմ 3D ցանկապատ և 3 հատ երկաթե դարպաս:



● Ղազարավանում Ղազարավան-Էջմիածին 500մմ-ոց ջրատարի վրա կառուցվել է օղախեռ:

● Ապարանում պոմպերի հովացման համակարգերի փականները փոխարինվել են  $d=25$ մմ թվով 5 հատ փականներով:



### 3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 50718 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 11960 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 9037 զանգ (75,6%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2923 զանգ (24,4%):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 38758 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 27718 զանգ (71,5%), իսկ մարզերինը՝ 11040 զանգ (28,5%):

#### 185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

	Ստորաբաժանում	2022 Հուլիս	2023 Հուլիս	
<b>Առևտրային</b>	Ընդամենը	11765	11960	1.66%
	Երևան	9183	9037	-1.59%
	Մարզեր	2582	2923	13.21%
<b>Շահագործում</b>	Շահագործում	36474	38758	6.26%
	Երևան	25396	27718	9.14%
	Արաբկիր	6761	3662	-45.84%
	Քանաքեռ-Զեյթուն	2762	3364	21.80%
	Մաշտոց	3061	4107	34.17%
	Շահումյան	3740	4303	15.05%
	Շենգավիթ	1539	2414	56.86%
	Կենտրոն	2447	2499	2.13%
	Հյուսիս/Ավան Լոր Լորք/	3207	3723	16.09%
	Էրեբունի	1879	3646	94.04%
	այդ թվում կոյուղու վթար	143	141	-1.40%
	այդ թվում դիտահորի խցանում	3599	3620	0.58%
	<b>ՍԱՐՁԵՐ</b>	11078	11040	-0.34%
	Հարավ	4976	6435	29.32%
	Հյուսիս	6102	4605	-24.53%
	այդ թվում կոյուղու վթար	32	57	78.13%
	այդ թվում դիտահորի խցանում	2473	2420	-2.14%
	<b>Ընդամենը</b>	<b>48239</b>	<b>50718</b>	<b>5.14%</b>

- 2022թ. հուլիս ամսվա համեմատ՝ 2023թ. հուլիս ամսին 1,66%-ով ավելացել է առևտրային զանգերի քանակը և 6,26%-ով՝ շահագործման զանգերի քանակը:
- 2022թ. հուլիսի համեմատ՝ 2023թ. հուլիս ամսին 33%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, 34%-ով ավելացել է 5 րոպեից ավել զանգերի քանակը և 45%-ով ավելացել է հայտարարությունների լսուժն ավտոմատ ծառայության միջոցով:
- 2022թ. հուլիսի համեմատ՝ 2023թ. հուլիս ամսին 10,55%-ով ավելացել են ջրամատակարարման բողոքները:

ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Հուլիս ամսին Հանրային կապերի ծառայությունը շարունակեց Ընկերության Պարտադիր կապիտալ աշխատանքների 2023 թվականի ծրագրով, ինչպես նաև տեղամասերի ուժերով ընթացող ջրաշինարարական աշխատանքների ակտիվ լուսաբանումը: Միայն հաշվետու ամսում՝ ATV, Տավուշ TV, Սյունիք TV, Քյավառ TV հեռուստաալիքներով հեռարձակվել է 6



ռեպորտաժ Արարատի, Տավուշի, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերում ընթացող ջրագծերի վերակառուցման աշխատանքներից: Նյութերը լուսանկարներով հրապարակվել են նաև ընկերության ֆեյսբուքյան և պաշտոնական կայքէջերում, ինչպես նաև [courier.am](http://courier.am) ֆրանսիալեզու կայքէջում: Հաշվետու ամսին ավարտվեց «Լաստիվեր» ջրի մատակարարման նոր համակարգի

կառուցման աշխատանքները, որի շնորհիվ Իջևանը կստանա վայրկյանում 30 լիտր հավելյալ ջուր: Ջրի սպառման պիկերին քաղաքին մատակարարվող ջրաքանակի ավելացման և հաստատուն ջրամատակարարում ունենալու նպատակով ընկերությունը Իջևանից 8 կմ հեռավորությամբ Լաստիվերի «Պաղ-ջուր» կոչվող գետակի վրա կառուցեց նոր ջրընդունիչ, հետո նաև 2300 մետրանոց խողովակաշար, որով ջուրը գետակից հասցվելու է ջրի մաքրման կայան (ՋՄԿ) վերամշակվելու և քլորացվելու: Լուսաբանվեց նաև Իջևանում ՊԿԱՄ 2023-ի շրջանակներում Ասլանյան փողոցի և 13 փակուղիների 140 բաժանորդի համար 1100 գծամետր ջրագծի վերանորոգման աշխատանքները:

ՊԿԱՄ 2023 թվականի շրջանակներում մեծածավալ աշխատանքներ են ընթանում նաև Սյունիքի մարզում: Հրապարակումներ և ռեպորտաժ պատրաստվեց այն մասին, որ Սպանդարյան և Իշխանասար բնակավայրերում ընդհանուր 200 բաժանորդի համար յուրաքանչյուր համայնքում վերանորոգվում է 4400-ական գծամետր ջրագիծ, ինչպես նաև համակարգը կառավարելի դարձնելու և կանոնավոր ջրի ճնշում ապահովելու համար երկու բնակավայրերում էլ կառուցվում են 50 խոր. մետր տարողությամբ օրվա կարգավորիչ ջրամբարներ: Հուլիս ամսին շատ էին ընկերության տեղամասերի ուժերով ջրագծերի կառուցման աշխատանքների մասին ռեպորտաժներն ու հրապարակումները:

Այսպես, Բերդ քաղաքից շուրջ 3 կմ հեռավորության վրա սկսվեց քաղաքի համար կարևոր նշանակություն ունեցող «Տավուշ» պահուստային ջրատարի վերանորոգման աշխատանքները: Այն մշտապես աշխատանքային պահելու համար «Տավուշ» շահագործման տեղամասը նորոգում է 360 գծամետր հատված, որից հետո կվերացնեն նաև ջրատարի այլ հատվածներում առկա վթարները, և այն պատրաստ կլինի ձմռանը լիարժեք գործարկվելուն:

Կրկին սեփական ուժերով, այս անգամ արդեն Արարատի մարզում, Ընկերությունը իրականացրեց ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի արդիականացման մեծածավալ աշխատանքներ: Ջրագծեր են կառուցվել Դեղձուտ, Տափերական գյուղերում, Վեղի և Մասիս քաղաքներում՝ ապահովելով սպառողներին կանոնավոր և հուսալի ջրամատակարարմամբ: Լուծվեց նաև Արտաշատ քաղաքի Մանուշյան փողոցի կոյուղագծի խնդիրը, որտեղ ստեղծված հակասանիտարական վիճակը տասնամյակների պատմություն ուներ: Իսկ քաղաքի Լուսինյան փողոցի կոյուղագիծը փոխվում է համայնքապետարանի հետ համատեղ: Վեղի ջուրը շատ կարևոր և մեծածավալ աշխատանք է սկսել նաև Արարատի մարզի Արաքսավան գյուղում, որտեղ 210 բաժանորդի համար կառուցում է 6 կմ երկարությամբ ջրագիծ ու ներքին ցանց: Նշենք, որ գյուղում երբևէ չեն իրականացվել ջրագծերի վերակառուցման աշխատանքներ:

Հաշվետու ամսում շատ կարևոր էր Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի ավագանու որոշումը, որով քաղաքի ջրամատակարարման համակարգի գույքի շահագործումը հանձնվեց Վեղի ջուր Ընկերությանը: Դրանից հետո Արովյան փողոցում սկսվեց 2550 գծամետր ջրագծի կառուցման աշխատանքները:

Սեփական ուժերով ջրագծեր են վերակառուցվում Միսիանում և Կապանում: Շուտով նոր ջրագծով ջուր կստանան նաև Կոտայքի մարզի Արամուս գյուղի 5 փողոցի և Երևանի Էրեբունի վարչական շրջանի Բուռնազյան, Միչուրիևի և հարակից փողոցների բաժանորդները: Նոր





ջրագծեր ունեն Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Ա. Խաչատրյան փողոցը, Նուբարաշեն վարչական շրջանի Ա թաղամասը և այլ փողոցներ ու թաղամասեր:




Հուլիս ամսին մեծ թվով հրապարակումներ են եղել վթարների վերացման աշխատանքներից: Մասնավորապես՝ Լենինգրադյան փողոցում, Էջմիածին-Աշտարակ-Ապարան միջպետական ճանապարհին, Մեղրիում, Վարդանիձորում, Ծաղկաձորում, Երևանում և հանրապետության այլ բնակավայրերում, որոնց արդյունքում հնարավոր է եղել խնայել մեծ ջրաքանակ:

Հաշվետու ամսում առաջնային էին նաև կոյուղագծերի վերակառուցման և խցանումների վերացման աշխատանքների մասին հրապարակումները: Լուսաբանվեց «Չարենցավան-Երևան» 600 մմ-ոց կոյուղու կոլեկտորի խցանի վերացման աշխատանքները, որոնք տևեցին 5 օր: Իսկ պատճառը ինչպես միշտ այն էր, որ բնակիչները

կոլեկտորը վերածել էին աղբանոցի: Հրապարակում եղավ նաև Էրեբունու վարչական շրջանից, երբ տեղամասի մասնագետները կոյուղուց հանեցին 32 պարկ աղբ: Նյութերի հիմնական շեշտադրումն այն էր, որը որքան էլ ՎեոլիաԹիֆս արագ արձագանքի այսպիսի դեպքերում, միևնույն է խցանումները նվազագույնի հասցնելու գլխավոր նախապայմանը ժամում է կոյուղու ցանցի քաղաքակիրթ օգտագործումը:

Ինչպես միշտ, շարունակվեցին ջրամատակարարման համակարգում ապօրինությունների հայտնաբերման աշխատանքները: Կոտայքում, Բյուրեղավանում և այլուր հայտնաբերվեցին ապօրինի և շրջանցող ջրամիացումներ:

Հաշվետու ամսում հրապարակումներ են եղել նաև ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման, վթարային և պլանային ջրանջատումների մասին:




*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*

## 5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

● Հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման բաշխիչ ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների ապահովման մակարդակի շարունակական բարձրացման, աշխատանքների կատարման նկատմամբ պատշաճ հսկողության սահմանման անհրաժեշտությունը, Ընկերության Հյուսիս Շահագործման տնօրինության թվով 8 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը:

- ▶ «Էքսկավատորի անվտանգ շահագործման պահանջները» թեմայով դասընթաց/գիտելիքների ստուգում,
- ▶ Վեոլիա Գրուպի «Փոստրակների և խրամուղիների մշակման աշխատանքներ» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթաց:




● ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով Աշխատանքային օրենսգրքի 88-րդ, 247-րդ հոդվածի 3-րդ մասի և 254-րդ հոդվածի, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ հաստատված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջները, ինչպես նաև Վեոլիա Գրուպի ԲՌԿ ստանդարտների պահանջները, Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 2 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը:


- ▶ Քլորի փոխադրմանը ներկայացվող անվտանգության պահանջներ մասնագիտական որակավորման դասընթաց / գիտելիքների ստուգում,
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները»,
- ▶ Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Անվտանգության ապահովումը սարքավորումներ շահագործելիս» թեմաներով դասընթաց:



2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումների ժամային համեմատական գրաֆիկ




5.2 ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 1 ՕԿՁ-ում և 2 քլորակայանում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսուճասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 43 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանուճների ղեկավարներին արձանագրված թերությունների շտկման նպատակով:

**2023 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների**



**5.3 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՆԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ**

● Համաձայն ՀՀ Շիրակի մարզպետի Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, 2023թ-ի հուլիսի 14-ին, Ընկերության «Հյուսիս» Շահագործման տնօրինության «Շիրակ» շահագործման տեղամասը ՈԱԱ Բաժնի համակարգմամբ, անցկացրեց արտակարգ իրավիճակներում «Վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը» թեմայով ուսուճասիրական:

**5.4 ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

● Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով և ելնելով համակարգերում տեխնաճին վթարների կանխարգելման և բացառման, ինչպես նաև մարդու կյանքի և առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաճեշտությունից, հաշվետու ամսվա ընթացքում «Պրոմէքսպերտ Գրուպ» ՍՊԸ-ի փորձագետների կողմից, պլանճամանակացույցի համապատասխան իրականացրել է Արտադրական Վտանգավոր Օբյեկտների (քլորակայան, քլոր տեղափոխող մեքենա, ամբարճիչ սարքավորում) տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



## 6.1. Համակարգչային ցանց

Մայիս-Հունիս ամիսներին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Շարունակվում է տրամադրվել նոր համակարգիչներ և հին համակարգիչները նույն պես վերաբաշխվել են:
- Կատարվել է մոնիտորինգային աշխատանքներ՝ անվտանգության տեսահսկման համակարգերի ուղղությամբ:
- Մի շարք աշխատանքներ են իրականացվել՝ անսարք սարքավորումները փոխարինելու նոր սարքավորումներով, ինչպես նաև տեղադրվել են նորերը:
- Գրուպի կիբերանվտանգության դեպարտամենտի հետ համատեղ մշակվել է նոր կիբերանվտանգության ուղղված քաղաքականություն կապված Արդյունաբերական կիբերանվտանգությունը բարձրացնելու նպատակով:
- Իրականացվել է Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Իրականացվել է Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Մպասարկվել է մոտավորապես 4600-5830 զանգ SS բաժնի աջակցության համարով:
- Գրանցվել, սպասարկվել և փակվել է մոտ 6000 SS աջակցության տոմս:

## 6.2. Ինտերակտիվ համակարգ

Մայիս-Հունիս ամիսներին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Մի շարք հաշվետվություններ են պատրաստվել և տրամադրվել ՀՕԿՀ և Ջրային Կոմիտե, ինչպես նաև տարբեր ներքին և արտաքին աուդիտորներին:
- Ինտերակտիվ համակարգում կատարվել են փոփոխություններ, կապված Առևտրային տնօրինության և այլ ստորաբաժանումների գործընթացը ավելի ավտոմատիզացնելու հետ
- Առևտրային տնօրինության տեղամասերի տեսուչների վերաբաշխման աշխատանքներ են իրականացվել
- Մշակվել և ներդրվել է նոր բջջային հավելված, ցուցմունքների օֆլայն գրանցման համար:
- Նոր հավելվածի սերվերային ապահովման և Ինտերակտիվ համակարգի միջև ստեղծվել է սինխրոնիզացման գլոբալ կապուղի, որով բոլոր տվյալները սինխրոնիզացվում են իրար հետ:
- Ակտեր Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Խախտման արձանագրություններ			
Տեղամաս	Ընդամենը		
	բանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Բյուսիս	10	9.14	1.78
Էրեբունի	10	4.22	0.80
Ենեգավիթ	52	12.91	2.49
Կենտրոն	28	19.33	3.93
Արաբկիր	27	23.94	4.69
Մաշտոց	88	38.49	7.01
Շահումյան	44	25.09	4.61
Եղվադղ	40	25.83	4.56
Քանաքեռ-Զեյթուն	15	22.75	4.25
ԱՎԸ	264	188.40	35.81
Լոռի	31	23.70	4.29
Շիրակ	39	15.92	3.06
Արթիկ	15	7.00	1.26
Արարատ	64	7.87	1.41
Արմավան	107	74.36	13.18
Գրազդան	28	11.64	1.62
Ալավերդի	14	5.54	1.00
Աշոցք	1	3.66	0.65
Արտաշատ	51	12.10	2.14
Գավառ	95	17.51	3.08
Գորիս	1	0.17	0.03
Դիլիջան	2	0.73	0.15
Եղեգնաձոր	2	1.03	0.19
Էջմիածին	76	37.55	6.71
Թալին	11	2.64	0.51
Իջևան	10	1.35	0.27
Կապան	5	3.09	0.62
Մասիս	38	13.00	2.29
Մեղրի	2	0.77	0.14
Նոյեմբերյան	1	0.52	0.09
Արմավիր	45	20.81	3.87
Սևան	2	0.49	0.09
Վայք	2	0.52	0.10
Վարդենիս	1	0.26	0.05
Աշտարակ	20	6.84	1.22
Զարենցավան	40	16.12	2.80
Սիսիան	10	6.19	1.09
Սպիտակ	34	4.96	0.91
Ստեփանավան	16	5.41	0.95
Տաշիր	1	1.55	0.27
<b>Ընդամենը</b>	<b>1342</b>	<b>673.4</b>	<b>124.0</b>

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ)  
 Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

<b>Լաբորատորիա</b>				
Տեղամաս	Միջամտություն		Անսարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Յյուախ	61	49.16	245	1.15
Էրեբունի	54	34.87	91	9.02
Շենգավիթ	44	16.72	201	7.66
Կենտրոն	86	115.09	173	5.99
Արաբկիր	25	36.99	176	7.14
Մաշտոց	138	190.23	175	7.03
Շահումյան	143	153.66	154	2.13
Եղվարդ	5	18.38	40	2.05
Քանաքեռ-Զեյթուն	15	26.80	149	2.52
Լոռի	174	126.89	209	1.32
Շիրակ	73	28.11	119	0.90
Արթևիկ	27	10.76	65	0.27
Արարատ	19	2.74	65	0.49
Աբովյան	66	51.62	138	1.00
Հրազդան	86	35.68	90	1.26
Ալավերդի	9	3.16	73	0.80
Աշոցք	7	3.37	33	0.25
Ապարան	3	1.78	12	0.40
Արտաշատ	24	3.68	86	1.74
Բերդ	10	2.60	56	0.46
Գավառ	14	6.87	120	1.12
Գորիս	24	7.30	43	0.92
Դիլիջան	4	1.10	16	0.21
Եղեգնաձոր	7	3.54	47	0.20
Էջմիածին	108	50.63	227	2.13
Թալին	16	6.80	61	1.50
Իջևան	12	1.70	48	0.28
Կապան	25	8.70	37	0.75
Ճամբարակ	3	0.18	5	0.01
Մասիս	60	27.30	57	0.39
Մարտունի		-	14	0.08
Մեղրի	8	7.48	25	0.17
Նոյեմբերյան	8	2.58	33	0.19
Արմավիր	79	78.34	255	1.67
Զեյթուն	4	1.03	3	0.00
Սևան	9	4.02	12	0.24
Վայք	1	0.52	18	0.09
Վարդենիս		-	9	0.02
Աշտարակ	20	7.99	73	2.52
Զարենցավան	46	20.23	110	0.75
Սիսիան	7	5.28	41	0.66
Սպիտակ	7	1.22	48	4.68
Ստեփանավան	23	17.01	37	0.23
Տաշիր	1	0.52	26	0.18
<b>ԸՆԴԱՄԱՆԸ</b>	<b>1555</b>	<b>1,172.6</b>	<b>3715</b>	<b>72.6</b>





«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: info@vjur.am